



Յ Ո Ւ Ց Ա Կ

ՄԱՅՐ ԱՅՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ԱՍՏՆԱԿԱԾ ԶԵՆԱԳՐԵՐԻ*

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրը 1950 թվականից սկսած հրատարակել է Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանին պատկանող ձեռագրատան մատյանների ցուցակը վեց հերթով։—

- Ա. 1—101 1950—52 թթ.
- Բ. 102—200 1960—63 թթ.
- Գ. 201—300 1964—72 թթ.
- Դ. 301—400 1973—76 թթ.
- Ե. 401—500 1976—80 թթ.
- Զ. 501—600 1980—84 թթ.

Ամսագրի սույն համարից սկսում ենք հրատարակել ձեռագրատան նոր ստացած մատյանների հերթական՝ յոթերորդ ցուցակը, նպատակ ունենալով հայագետների և մասնագետների լայն շրջանակների ուշադրության հանձնել այն։

Վերջերս Նոր Վեհարանի գրադարանից և Մայր Աթոռի արխիվից ձեռագրատուն տեղափոխվեցին արժեքավոր բավաթիվ ձեռագրեր, այսպես, օրինակի համար.

Ա. Թուրքիայի հայոց Ամենապատիվ Պատրիարք՝ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի գրչին պատկանող 22 արժեքավոր ձեռագրեր, որոնք ներկայացնում են 1933—34 և 1939—40 թթ. Ս. Երուսաղեմի հայոց Ս. Հակոբ վանքի ժառանգավորաց վարժարանում և 1942—43 թթ. Անթիլիասի Դպրեվանքում կարգացած դասախոսությունները՝ աստվածաբանության, քարոզչության, Կորնթացվոց և Կաթողիկե թղթերի մեկնության, Նոր Կտակարանի կանոնների, Դավթի սաղմունքների ուսումնասիրման և այլ դասընթացների մասին։

Բ. Տ. Ասողիկ վարդապետ Ղազարյանի, հետազոյուն արքեպիսկոպոս (1909—1978), գրած 10 արժեքավոր ձեռագրերը, որոնք Չինաստանում, Հնդկաստանում, Ավստրալիայում և Երուսաղեմում, օրը-օրին նրա գրած օրագրություններն են։ Պահված են Չինաստանում գրված 1937—39 և 1944—48 թթ., Սիդնիում գրված 1955 և 1958 թթ., Երուսաղեմում գրված 1957 թ. և Կալիֆոռնիայում գրված 1961 թ. օրագրությունները։ Շատ արժեքավոր են Չինաստանում գրվածները, հատկապես Մուկդենյան օրագրությունները (1944—45 թթ.), երբ հանգուցյալ հոգևորականը գտնվել է այդ երկրի ճապոնական գրավման ժամանակ համակենտրոնացման ճամբարում։ Հեղինակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Չինաստանի հայկական գաղթօջախների մասին։ Այս նյութերից պիտի անսպասել օգուտի այն պատմաբանը, որ հետազայում ուսումնասիրելու է չինահայ գաղութի, հատկապես 1937—48 թթ., պատմությունը։

Գ. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի (1903—1972) գրած 12 արժեքավոր ձեռագրերը, որոնցից հինգը պատարագի, շարակնոցի, տաղերի և մեղեդիների նոթայի մատյաններ են, երեքը՝ շատ արժեքավոր օրագրություններ, գրված օրը-օրին, մեծադույն մասամբ Հնդկաստանում և Ավստրալիայում, ինչպես նաև Մոսկվայում, Տաշքենդում, Քեյրոսում և այցելած այլ քաղաքներում, իսկ մնացած չորսն էլ այլ բնույթի ձեռագրեր։ Հետագայում հնդկահայ գաղութի պատմությունն ուսումնասիրողը արժեքավոր և անսահման նյութ կարող է գտնել հատկապես հեղինակի վերոհիշյալ օրագրություններում։

Վերոհիշյալ մատյաններից բացի Մայր Աթոռի ձեռագրատունը վերջերս ստացել է նաև հետևյալ ձեռագրերը.—

- * Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի Ռ Ռ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի Ռ Ռ Ը—Ժ-ից, 1968 թվականի Ռ Է-ից, 1970 թվականի Ռ Ռ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի Ռ Ռ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի Ռ Ռ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի Ռ Ռ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի Ռ Ռ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի Ռ Ռ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի Ռ Ռ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի Ռ Ռ Գ—Ժ-ից, 1978 թվականի Ռ Ռ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի Ռ Ռ Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի Ռ Ռ Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից, 1981 թվականի Ռ Ռ Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի Ռ Ռ Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից, 1983 թվականի Ռ Ռ Բ—Գ-ից, Է—Ժ-ից, 1984 թվականի Ռ Ռ Բ—Գ-ից և Ե—Զ-ից։

Դ. 17—19-րդ դարերի Ամենայն հայոց կաթողիկոսներ՝ Փիլիպպոս Աղբակեցու, Հակոբ Ջուղայեցու, Ղու-

կան Կարնեցու և Ներսես Աշտարակեցու թանկարժեք կոնյակները, որոնք մեծ արժեք են ներկայացնում մեր եկեղեցու այդ ժամանակաշրջանի պատմության համար: Չեռագրերը նվեր են ստացված Ե. Չարնեցի անվան գրականության և արվեստի թանգարանից:

Ե. Ստամբուլից ստացվեցին արևելյան լեզուների հմուտ գիտակ և գրականագետ հանգուցյալ Գեորգ Սիմբեշյանի (1870—1951) 27 պրականոց, ձեռագրի հավաքածուն, «Ոսկեմատյան տիեզերական գրականության» վերակազմով, որ շատ արժեքավոր մի աշխատություն է: Այստեղ ներկայացված են մեր հին և արդի գրականության լավագույն նմուշները, մեր դասականների գեղեցիկ հատընտիրները, ինչպես նաև հին և նոր եվրոպացի և արևելյան գրողների ու բանաստեղծների ընտրանի գործերից մեծ խնամքով ջղված և թարգմանված գործերը:

2. Վերջում Մայր Աթոռի ձեռագրատունը բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր է ստացել հայրենիքի և արտասահմանի մեր հայ հավատացյալներից, որոնք սրտաբուխ կերպով տասնյակներով մատյաններ են նվիրել Ս. Էջմիածնին: Տանք մի քանի օրինակներ միայն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

1. Իրանից 1979 թ. հայրենադարձ Մելիքյան ընտանիքը նվիրել է 15—16-րդ դարերի «Թուխմանուկի» արժեքավոր Ավետարանը (№ 508):

2. Ս. Գայանե վանքի միաբան Ս. Նշան քահանա Բեյլերյանը նվիրել է երկու ձեռագիր՝ 17-րդ դարի մի Ավետարան (№ 515) և 18-րդ դարի մի Քարոզգիրք (№ 516):

3. Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Ս. Տիրան վարդապետ Կյուրեղյանը նվիրել է երկու ձեռագիր՝ 18-րդ դարի մի Բարոյախոսություն (№ 539) և 17—18-րդ դարերի սլավոնական մի Ժողովածու (№ 540):

4. Արովյան շրջանի Հոգևոր հովիվ Ս. Աբրահամ քահանա Մարգարյանը նվիրել է 17—18-րդ դարերի մի Մաշտոց (№ 570):

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԻՑ

1. Իսի-Լե-Մուլինոյից (Ֆրանսիա) Չատիկ Ասլանյանը նվիրել է երկու ձեռագիր՝ 15—16-րդ դարերի մի Եարակնոց (№ 510) և 17—18-րդ դարերի մի Տուացույց (№ 511):

2. Ստամբուլից (Թուրքիա) Ռաֆֆի Տիոնյանը նվիրել է 18-րդ դարի մի Ուրբաթագիրք (№ 518):

3. Ռումիիայի և Բուլղարիայի առաջնորդ Ս. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը Բուխարեստից նվիրել է 1611 թ. մի Կանոնագիրք (№ 538):

4. Հնդկահայոց Հոգևոր հովիվ Ս. Հակոբ քահանա Գյուլչյանը Կալկաթայից նվիրել է 19 և 20-րդ դարերի Կոնյակների երկու մատյաններ (№ 536 և 537):

5. Լուս Անջելոսից (ԱՄՆ) Մարի Կանիմյանը նվիրել է 1438 թ. մի Գիրք ձեռնադրության (№ 614):

Մայր Աթոռի ձեռագրատունն իր խորին շնորհակալությունն է հայտնում այն բոլոր նվիրատուներին, որոնք ինքնաբուխ կերպով վանապան տեսակի ձեռագիր մատյաններ են նվիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին վերջին շրջանում:

Այստեղ պետք է հպարտությամբ նշել, որ այսօր ձեռագրատունն ունի ավելի քան տասը լեզուներով մատյաններ: Կան մինչև 12—13-րդ դարերի արժեքավոր ձեռագրեր, երկու հատ ոսկե կապով ունկում Ավետարաններ (որոնցից մեկը Գրիգոր վարդապետ Տաթևացու ձեռքով գրված 1374 թ. մագաղաթյա թանկարժեք Ավետարանը), ինչպես նաև այլ թանկագին նմուշներ, գրված Նոր Ջուղայի, Վասպուրականի, Երուսաղեմի, Կ. Պոլսի, Կիլիկիայի և հայ մշակույթի այլ կենտրոններում:

Մայր Աթոռի ձեռագրատուն հավաքածուն այսօր ունի ավելի քան 640 մատյաններ և 72 պատահիկներ, ձեռք բերված Վեհափառ Հայրապետի ջանքերով և հավատացյալ նվիրատուների սրտաբուխ նվերներով: Ուրախությամբ պետք է նշել այստեղ, որ Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ունեցած անգնահատելի հարստությունից հետո Ս. Էջմիածնի ձեռագրատան հավաքածուն հանդիսանում է առաջին մեծագույն հավաքածուն ամբողջ Խորհրդային Միության մեջ:

Հանուն Վեհափառ Հայրապետի մի անգամ ևս սըրտագին կոչ ենք անում մեր եկեղեցու բոլոր հոգևորականներին ու հավատացյալ ժողովուրդին, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, հարստացնելու համար Մայր Աթոռի ձեռագրատունն իրենց նվերներով, որոնք վերջնական ապահով տեղը գտնելու են Ս. Էջմիածնի հովանու ներքև:

Ն. ՏԵՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Չեռագրատան վարիչ

(Շարունակելի)